

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-258-14.08.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացվող օրենքի նախագծով առաջարկվում է կանանց՝ յուրաքանչյուր ծննդաբերությունից հետո պետական պատվերի շրջանակներում պարտադիր տրամադրել հավաստագրով սահմանված անվճար բժշկական հետազոտության միանվագ նպաստ, որը ներառում է մայրական կաթի որակի, Ca և D վիտամինների, արյան հետազոտությունները և կրծքի սոնոգրաֆիա կամ մամոգրաֆիա: Հավաստագիրը տրամադրվում է մինչև յուրաքանչյուր ծննդաբերության հետծննդյան շրջանի ավարտը, որն ուժի մեջ է մտնում հետծննդյան շրջանի ավարտի օրվան հաջորդող օրը և գործում է մեկ տարի ժամկետով: Ըստ հիմնավորման՝ օրենքի նախագծի մշակման հիմք են հանդիսացել մայրերի հետ կատարված քննարկումները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է գործող օրենքը թողնել անփոփոխ՝ նկատի ունենալով ստորև ներկայացված հանգամանքները՝

1) ներկայացվող օրենքի նախագծով առաջարկվող ծննդկանի առողջության պահպանման միանվագ նպաստի բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ ըստ էության առաջարկվում է մշակել և կյանքի կոչել առողջապահական ծրագիր՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնելով օրենքի նախագծով առաջարկվող հետազոտություններ: Հարկ է նշել, որ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ պետական նպաստը պետական բյուջեի միջոցներից պարբերաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն է: Ըստ այդմ առաջարկվող ծրագրի հետ կապված հարաբերությունները չեն կարող հանդիսանալ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորման առարկա:

2) մայրերի հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքները չեն բխում ապացուցողական բժշկության թեզերից: Բացի դրանից, հստակ չէ, թե հատկապես ինչ հիմքերով են ընտրվել նշված լաբորատոր-գործիքային հետազոտությունները: Ապացուցողական բժշկագիտությամբ հիմնավորված և հստակ արդյունքային ցուցանիշների առկայության դեպքում պետք է սահմանվի ծայրահեղ անհրաժեշտ բժշկական հետազոտությունների ցանկ՝ հաշվի առնելով հետծննդյան շրջանում կանանց առավել հաճախ հանդիպող հիվանդությունների և ախտաբանական վիճակների վերաբերյալ վերջին առնվազն երեք տարվա տեղեկատվությունը, ինչը թույլ կտա համապատասխան հաշվարկների հիման վրա տալ ֆինանսական գնահատական:

3) օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվող ծնելիության մակարդակի բարձրացման կապակցությամբ հայտնում ենք, որ ծնելիությունը դեմոգրաֆիկ ցուցանիշ է՝ կախված սոցիալական, տնտեսական ցուցանիշներից, բնակչության տարիքաստեղծային կազմից, և առողջապահական բաղադրիչը որոշիչ չէ:

4) օրենքի նախագծի ընդունումը ենթադրում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի զգալի ավելացում, որի չափը որոշել հնարավոր չէ՝ համապատասխան տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված: